№ 194 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

№ 194 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսականն 85 կօպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՕՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Հրատարակութիւնը լոյս է տալիս օրական 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է տարին լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կօպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կօպ.։

1914 թ. տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կ'ունենան բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը տանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐՇՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրէժիկի։

ԱՊՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վանքի աւագ եկեղեցու միաբան Գրիգոր քահանայ և սրա ամուսին Եւա և դուստր Գոհարիկ Յօզաէֆնաթեանցները, Սօֆիա Սարեանց և սրա դուստր Մարիամ Պառաւեանց խորին վշտով յայտնում են ազգականներին՝ առաջինները իրանց թանգագին և անգնահատելի գոհար, երկրորդը իր հարազատ քոյր, երրորդը իր եղբօր-դստեր և չորրորդը իր մօրեղբօր-դստեր՝

ՀՈՒՓՍԻՄԷ ԽՕՋԱԷՖՆԱԹԵԱՆՑԻ

վախճամ մահը, որ տեղի ունեցաւ օգոստոսի 31-ին։ Ամբիծքը այսօր, չորեքշաբթի, սեպտեմբերի 3-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Յուղարկաւորութիւնը վաղը, հինգշաբթի, սեպտեմբերի 4-ին, առաւօտեան ժամը 10-ին, քնակարանից (Մեծ-Վանքի փողոց, № 26) դէպի Վանքի եկեղեցին։ Թաղումը Վերայի գերեզմանատունը։
Ընդրվում է պահները չը դնել։ 829. 1—1

Կանանց 4-դասեան Մասնաւոր Դպրոց, II կարգի
Նշանակութիւնների ընդունելութիւնը այրուձնական, բարձր և տասերին բաժան., I, II, III և IV դասար. չարունակվում է առ. ժամը 10-ից մինչև ցեր. ժամը 1-ը։ Ռեչբէչիելսկայա փող. № 17 (Պօղոսեանցի տունը), Միխայլովսկի պրօսպէկտով, երկրորդ փողոց)։ առ. (ու.) 828. 2—1

Վ. ՍՄԲԱՏԵԱՆԻ
Մանկական պարտիզում եւ ուսումնասրանում
պատրաստվում են աղջիկներ բոլոր պետական միջնակարգ դպրոցներ մանելու։ Ներկայ թէ մայիսին քննութեան ենթարկվող երեխաները բոլորը անվճար քննութիւնը բռնեցին։ Մայրենի լեզուն հայ երեխաներին պրատիր է։ Թայլերի հետ պարապում են ճաշից յետոյ։ Ընդունելութիւնը ամենայն օր՝ 9—2, 4½—8 ժ., պարապմունքը սկսվում է (առ.) 826. 7—5

ԱՏԱՄՆԱԲՈՒԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը նրբափողոցից։
առ. (ա. օ.) 804. 0—8

ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՇԱՐՔԸ

Վերջին օրերի հեռագիրները ասելու են յաղթանակների շարքը, որ ռուսական զօրքերը տանում են աւստրիացիների՝ և ֆրանսիական զօրքերը՝ գերմանացիների դէմ։

Իլօվ կամ Լեմբերգ քաղաքի գրաւումը ռուսական զօրքի կողմից խոշոր դէպք է համարվում։ Գալիցիայում, որի մայրաքաղաքն է Իլօվը, արդէն մտցված է ռուսական վարչութիւն և ընդհանուր նահանգապետ նշանակված է կոմս Բօբրինսկին։ Եթէ ի նկատի ունենանք, որ անցեալ տարի աւստրիական կառավարութիւնը մի անգին դատ էր բացել Գալիցիայի հայրենասէրների դէմ, մեղադրելով նրանց պետական դաւաճանութեան մէջ և կոմս Բօբրինսկին ևս ամբաստանվում էր իբրև դրդիչ, այն ժամանակ նրա ազատումը իբրև նուաճված Գալիցիայի ընդհանուր նահանգապետ՝ որոշ նշանակութիւն է ստանում։

Ռուսական զօրաբանակի՝ աւստրիացիների դէմ տարած փառաւոր յաղթութիւններից յետոյ պէտք է համարել, որ Աւստրիայի հզօրութիւնը վերջնականապէս ջախջախված է, մանաւանդ որ միւս կողմից ևս նրան ջարդ են տալիս սերբերը և չերնօգօրցիները։ Ջախջախելով Աւստրիան, ռուսական զօրքերը հնարաւորութիւն կունենան կենտրօնացնել իրանց ոյժերը գերմանացիների դէմ, որոնց ամբողջ արդէն թեքվել է դէպի անկումն, որովհետև Ֆրանսիական և բելգիական զէնքերն արդէն սիրտում են նրանց նահանջել և դուրս գալ գրաւած վայրերից։ Ինչպէս երևում է, Ֆրանսիական զօրքերի գերագոյն հրամանատար զօրավար Ժօֆֆրի պլանը պակվում է աջողութեամբ։ Այժմ հետզհետէ լուսաբանվում է այն տարակուսանքը, որ ծածկել էր, թէ ինչ է պատճառը, որ Ֆրանսիական զօրքերը տեղի են տալիս թշնամու առաջ և թոյլ են տալիս նրան առաջանալ երկրի մէջ ու հասնել նոյնիսկ մինչև Պարիզի շրջանները, անշուշտ, դա մտածված, ծրագրված ռազմագիտական մի տակտիկա էր, որի պատուղներն այժմ տեսնում ենք հասունացած. այժմ ամենուրեք գերմանական զօրքերը նահանջում են, և լուսեցաց, սակաւախօս Ժօֆֆրը վերջապէս կարողանում է ազատել՝ «Մեր յաղթութիւնը դառնում է փակատար. թշնամին ամենուրեք նահանջում է»։

Այժմ Գերմանիան նմանում է այն կատաղի գազանին, որ դուրս էր եկել իր որջից և մոնչում էր, ահ և սարսափ տարածելով, բայց որսորդները աջող դարձուածքով կարողանում են շրջապատել նրան և իրանց հրաշէկ ձողերով ստիպել նրան վերադառնալ և նորից փակվել իր որջում։

Անհանգստութիւն է պատճառում մի քիչ Թիւրքիան, որ տատապում է անիշխանութեան մէջ։ Արկածախնդիր էնվէր փաշան կամենում է նոյնիսկ թիւրքական գահի ժառանգ դառնալ։ յեղափոխութիւնը ծայր է տալիս, և մենք կանգնած ենք շատ անակնկալների առաջ Թիւրքիայի վերաբերմամբ։ Եթէ նոյնիսկ Թիւրքիան ինքն պատերազմ չը յայտարարէ, բայց ի նկատի ունենալով որ Անգլիան ուլտիմատումի ձևով մի քանի պահանջներ է արել Թիւրքիայից, ուստի եթէ սա չը խոնարհվի Անգլիայի կամքի առաջ, շատ հաւանական է, որ Անգլիան ինքը պատերազմ յայտարարէ Թիւրքիային, և այդ դէպքում Ռուսաստանը, իբրև դաշնակից, պարտաւոր կը լինի նոյնպէս դիմել զէնքի։

Եթէ ի նկատի ունենանք, որ Ռուսաստանը շատ հաշիւներ ունի դրատելու Թիւրքիայի հետ, պէտք է ասէինք, ուելի լաւ, թող նա այժմ, երբ արդէն գինաւորութեան մէջ է, այդ հաշիւն ևս յարդարէ և միանգամից վերացնէ այն կնճիռները, որոնք կուտակվել են դարերով։ Ու գուցէ խեղճ հայ ազգն ևս, որի հայրենիքը Թիւրքերի պատճառով ժողովք է դարձել, կարողանայ գտնել իր վերկութիւնը և ապատութիւնը չնորհիւ ռուսական հզօր արծուի։

Հ. Առաքելեան

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականոցում։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԷՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
1—2 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Սեպտ. 1-ից. Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Աւստրիական զօրաճակատում մեր զօրքերն անցնում են Սան գետով։ Բավա-Ռուսկայի հէնց սահմանին մօտ վերցրել ենք 30 թնդանօթ, աւելի քան 8000 գերու, մեծ քանակութեամբ հրացէն ու մատակարարական մթերքներ։ Այդ ուղղութեամբ մեր հետապնդման հետևանքը յայտնի չէ դեռ։ Բելգօրայի շրջանի ճահիճներում որոնվում են նոր աւստրիական հրետանիներ։ Բրեսլիօվի զօրքը, որի դէմ աւստրիացիք վերջնական յոյսահատական գրոհի ձեռնարկեցին, յարձակման դիմելիս ձեռք է ձգել շատ գերիներ և թնդանօթներ։ Գիներալ Բրուսիլովը վկայում է, որ զօրքերը երեան հանեցին տոկունութիւն, զուարթութիւն և քաջութիւն։ Զօրապետները հաստատ ու հանգիստ հրամանատարում էին զօրաճասերին, յաղթութիւն տանելով կրիտիքական րոպէներին։ Մանաւանդ պէն. Բրուսիլովը ընդգծում է գիներալ Ռադկօ Դիմիտրիեվի աչքի ընկնող գործունէութիւնը։ Դէհպարե աջ ափին աւստրիացիք ետ են մղված դէպի Թօրօգօբէշ։ Ռուկովինայի գլխաւոր քաղաքը՝ Չերնովիցան և ամբողջ մերձակայ շրջանը մենք գրաւեցինք առանց կռիւ»։

Պալաճնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Գիներալ-ադիւտանտ Ռէննէնկամպֆի զօրքի արագ ու կորուկ առաջխաղացումը դէպի Արևելեան Պրուսիա և մինչև վիւռոից բաղկացած աւստրիական զօրքի վրա տարած վճռական աջողութիւնները ստիպեցին գերմանացիներին ետ տանել իրանց ոյժերի խոշոր մասը արևմտեան սահմանից։ Օգ. 15—25 գերմանացիք անընդհատ օժանդակ գնդեր էին ուղարկում դէպի իրանց արևելեան զօրաճակատը։ կարգադրվելով, նրանք յարձակման դիմեցին Մազուրեան լճերով և սպառնացին խոշոր ոյժեր կենտրոնացնել Նօրդէնբուրգ-Զօլդաւ-Սուվալկի զօրաթևի վրա։ Այդ զօրախաղը, որ սպառնում էր ծանր դրութեան մէջ դնել գիներալ Ռէննէնկամպֆի զօրաբանակին, դիմադրութեան հանդիպեց մեր երկու կողքի պաշտպանող զօրքերի կողմից, որոնք հերոսաբար կանգնեցրին թշնամու գրոհը։ Սեպտ. 1-ին, կռիւներից յետոյ, որոնք շատ թանկ արժեցին թշնամուն, մեր քաջարի զօրքերը լիակատար կաղմով դուրս հանվեցին դժուարին կացութիւնից և գրաւեցին վերջնական դիրքերը յետագայ զօրաձեռնութիւնների համար»։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
1—2 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է. «Մեր ձախ զօրաթևում թշնամին շարունակում է նահանջել և մաքրել Ամիէնը, հեռանալով դէպի արևելք։ Սուասոնի և Ռէյմսի միջև նա նահանջել է դէպի հիւսիս Բէլիի ուղղութեամբ։ Մարնայի վրա, Ռէյմսից դէպի հարաւ-արևելք, թշնամին դիմադրութիւն ցոյց չը տուեց։ կենտրօնում նա մաքրել է Էվէնին, Բրամանդը, Լէ-Բուան, հարաւում դեռ գրաւում է Արգօնը։ Մեր ձ զօրաթևում Մէրդում գտնվող գերմանացիք նահանջում են Սէն-Դիէէի և Լիւնէվիլի միջև։ Մենք նորից գրաւեցինք Բանտէտալը, Բակկարան, Ռէմբէրվիլը, Լօմէնին, Գօնտ-ա-Մուասոնը»։

Գիներալիսիմուս Ժօֆֆրը հրաման արձակեց, որ ասում է, թէ 5 օր շարունակ տևող ճակատամարտը յանգից անժխտելի յաղթութեան և առաջին, երկրորդ և երրորդ գերմանական զօրաբանակների զօրքերի նահանջի։ Մեր ձախ զօրաթևում և կենտրօնում գերմանական չորրորդ զօրաբանակը նահանջում է հիւսիսային ուղղութեամբ դէպի Տէրմէդ։ Ամենուրեք թշնամին թողել է բազմաթիւ վիրաւորների և մեծ քանակութեամբ ռազմամթերք։ Մենք ամենուրեք գերում ենք թշնամի զինուորների։ Մեր զօրքերը՝ առաջանալով՝ վկայում են, որ գերմանացիք օրհասական չանքեր էին գործ դնում մեր արշաւանքը կանգնեցնելու համար։ Մեր արշաւանքը պակվեց լիակատար աջողութեամբ։ Բոլոր օֆիցէրները, ունտէր-օֆիցէրները և զինուորները արդարացրին իմ սպասելիքները. ամենքն էլ արժանի են հայրենիքի շնորհակալութեան»։

Գիներալ Գալլիէնին իր արձակած հրամանի մէջ ասում է, որ բաղդաւոր է յայտնել իրան ենթակայ զօրքերին և իր կողմից շնորհաւորել Պարիզի զօրքին, որ մանակցեց պատերազմական գործողութիւններին։ Նա նոյնպէս շնորհաւորում է Պարիզի մօտ բանակած զօրքերին՝ գործադրած չանքերի համար, որոնք նոյն կերպ շարունակվելու են։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բելգիական կառավարութիւնը երէկ հրատարակեց հետեւեալ հաղորդագրութիւնը. «Զօրս օրեայ յամառ կռիւներից յետոյ Բրիւսէլ-Լավէնա-Մալին շրջանում բելգիական զօրքերը նահանջեցին դէպի Անավէրպէնի բերդերը թշնամու գերազանց ոյժերի հանդէպ։ Գերմանացիք Բրիւսէլի ճանապարհին ունէին շատ մարդ զինքեր։ Եւ որպէսզի պահեն այդ դիրքերը, նրանք գործի հանեցին Բելգիայում գտնվող բոլոր իրանց ազատ ոյժերը, և, բացի դրանից, այն երկու զօրաբանակը ևս, որոնք նշանակված էին Ֆրանսիա դիմելու։ Բելգիացիների կորուստները խոշոր են, բայց գերմանացիների կորուստները աւելի խոշոր են»։

ԲՕՐԴՕ.—«Matin»-ը պնդում է, որ Մարնայի կռւում մանակցում էին ոչ պակաս 46 մեծ զօրաբանակ, ամեն կողմից 23 հատ։ «Matin»-ը գտնում է, որ կրօնպրինցի զօրքի դրութիւնը Արևմուտում վտանգաւոր է։ Նահանջելով դէպի ձախ, նա կը հանդիպէ շատ նահանջող Վիւրտեմբէրգի պրինցի զօրքին։

ՊԱՐԻԶ.—Օգոստոսի 31-ին, ժամը 11-ին հրատարակված պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է. «Գլխաւոր բանակից տեղեկութիւններ չը կան։ Դաշնակիցների արշաւանքը շարունակվում է ամբողջ ռազմաճակատում։ Նրանք շարունակ բաղխվում են հակառակորդի հետ։ Ձախ զօրաթևում մենք անցանք էն գետը»։

ԼՕՆԴՕՆ.—«Թայմսի»՝ Օստենդէնի թղթակիցը հաղորդում է, որ Բելգիայում գտվող պրուսական և բաւարական զօրքերի մէջ ունեցաւ լուրջ ընդհարում, որ վերջացաւ կռւով։ Սպանվել են 10 զինուոր։

Բիսմարկի արշիվներում՝ Գերբէրտօզէի մօտերը տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ գերմանացիք կորցրին 30 սպանված։ Գերվել են 2 գերմանացի օֆիցէր, 15 ունտէր-օֆիցէր և 56 տեղացի զինուոր։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
2 սեպտեմբերի

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.—Վօլֆի գործակալութիւնը պաշտօնապէս հաղորդում է, որ «Ակէա» փոքր յածանաւը Չրասուզվել է թշնամու ստորջրեայ նաւի ձգած ականից։ Նաւասարները համարեա բոլորը ազատվել են։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 և 2 սեպտեմբերի

ՀՌՕՄ.— Սօցիալիստների Հռօմի միութիւնը, քննելով միջազգային դրութիւնը և Իտալիայի հնարաւոր միջամտութիւնը եւրօպական միջադէպին, բանաձև ընդունեց, որ վկայում է թէ՝ միջազգային սօցիալիստական փոխադարձութեան գաղափարը, որ ուղղված է սպառազինված աշխարհի և ռազմի քաղաքականութեան դէմ, անաչառութեան մատնվեց հզօր գերմանական և աւստրիական սօցիալիստական կուսակցութեան մեղաւորութեամբ, որ, բաւականին չը նեղհակելով ռազմասէր արամադրութեանը, ստիպեց բելգիացի և ֆրանսիացի սօցիալիստներին պայքարել սեփական հայրենիքի պաշտպանութեան համար։ Բանաձևը աւելացնում է, որ երկու կենտրօնական մասերի վիւռօրական արիստօկրատիայի յաղթութիւնը կը ստրկացնէ բովանդակ Եւրօպան իմպէրիալիստական հեգեմօնիայով՝ աւելի ևս բեակցիօն միլիտարիստ քնաւորութեան։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Վիէննայի լրագիրները հաստատում են այն տեղեկութիւնները, որ վէնքէ է կանչված աւստրիական ամբողջ լանդշտուրմը։ Գերմանական լրագիրներում տեղեկութիւններ են տպվում այն մասին, թէ ընդունում են կամաւորներ-հրահանգիչներ բոլոր տեսակի զօրամասերում։

Բոմբեխայից ստացված տեղեկութիւնների համաձայն, Բոմբեխայի հասարակական և հասարակական շրջանների համակրութիւնը դէպի երբեակ համաձայնութեան պետութիւնները և դէպի նրանց ազգական աջողութիւնները արտայայտվում է վերջին օրերը աւելի օրոշակի և անմիջական կերպով։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—«Նիւ-Եօրկ-Տրիբունէն» հարցին սեղանաւորները միաբերան պատասխանել են, թէ անհնարին է Գերմանիայի համար բեալիզացիա անել թէկուզ մի մասը այն 2500 միլիոն դօլլար փոխառութեան, որ մտադրութիւն կար բաց թողնել Միացեալ Պետութիւնների մէջ։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.— Վիէննայից հաղորդում են, որ Աւստրիայում 1892, 1893 և 1894 թ. թ. ծնված տղամարդիկ կանչվում են բժշկական քննութեան ենթարկվելու համար. պիտանիները ընդունվում են ծառայութեանս։

Վօլֆի գործակալութիւնը Բիւցաւի գործակալութեանը լինդրից՝ հրատարակել այն յայտարարութիւնը, որ իբր թէ ուղարկել է պետական կանցլերը Ասկվիտի վերջին ճառի առիթով։ Այդ յայտարարութեան մէջ պետական կանցլերը ի միջի այլոց ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ Ասկվիտը չիշեց միայն Բելգիայի, Հօլլանդիայի և Շվէյցարիայի չէզոքութեան մասին, լռութիւն պահպանելով սկանդինաւեան երկիրների մասին—ա՛յն պատճառով, արդեօք, որ Գերմանիան չէ մտադրում խախտել այդ երկիրների չէզոքութիւնը, կամ, գուցէ, Անգլիան Բալտիկ ծովը մանելու նկատումով և յանուն Ռուսաստանի ռազմական գործողութիւնների չէ համարում Դանիայի չէզոքութիւնն անձեռնմխելի։ Վօլֆի գործակալութիւնը հրատարակել է այդ յայտարարութիւնը իբրև Բիւցաւի գործակալութեան հաղորդագրութիւն՝ ստացված կօպենհագէնից։ Այդ նկատմամբ է նոր ձև՝ ազդելու չէզոք պետութիւնների հասարակական կարծիքի վրա յօգուտ Գերմանիայի, որպէս զի կասած զարթնէ Անգլիայի ծրագիրների նկատմամբ։

Բէյտէրի գործակալութիւնը հեռագրում է. «Անգլիա եկաւ հնդիկ մահմեդականների հոգևոր պետ Ակազանը, որ առաջարկել է Մեծ Բրիտանիային իր ամբողջ ունեցածը պատերազմի կարիքների համար, յայտնելով նոյնպէս, որ պատրաստ է, չունենալով զինուորական կրթութիւն, հասարակ զինուոր մանել անգլիական զօրքի մէջ։

ՄՕՍԿՎԱ.—Հանդէսով բացվեց լեհական հիւանդանոցը 25 մահճակալով։

Հանդիսաւոր պատարագից յետոյ բացվեց Մօսկվայի ֆրանսիական գաղութի հիւանդանոցը 50 մահճակալով։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Բացվեց սիմոզի անուան հիւանդանոցը 50 մահճակալով։

Շատ քաղաքներում հասարակական օգնութեան կազմակերպութիւնը շարունակվում է։

Հրատարակվեցին Բարձրագոյն հրամանները. 1) բաց թողնելու պետական գանձատան տոմսեր 300 միլիոն րուբլի գումարի. 2) ընդունելու ռուսահպատակութեան մէջ Նորին Բարձրութիւն պրինցուհի Հեղինէ Դէօրգիևնա Սախսէ-Ալտինբուրգսկայային, համաձայն նրա խնդրի։

Կառավարութիւնը բացատրեց, որ պահեստի զինուորների ընտանիքների բաժին, որ հայրենիք է ուղարկվում ձրիաբար III և IV կարգի վագոններով, պէտք է փոխադրվի ընդհանուր հիմունքներով, այսինքն մի պուդը ձրի, մնացածը՝ բաժի ընդհանուր տարիֆով։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը առաջարկեց ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին անյապաղ կազգագրել, որպէսզի ըստ հնարաւորութեան լայն կերպով՝ կանանց միջնակարգ հաստատութիւններում՝ աշակերտահիները մասնակցեն վիրաւորների համար սպիտակեղէն պատրաստելուն։

Բարձրագոյնս հաստատվեց Ֆինլանդիայի միջնակարգ կրթական հաստատութիւնները վերակազմելու նախագիծը։

ՊԱՐԻԶ.—«Ֆիգարօն» յայտնում է, որ Իտալիան, առաջինը մեկուսանալով երբեակ դաշնակցութիւնից, Բ. Դրանը բողոք է յայտնել կապիտուլացիաները վերացնելու դէմ։

«Ֆիգարօյի» տեղեկութիւնների համաձայն, գիներալ Ժօն-դէ-Գօլցը մեկնեց Անգլիա և վերջին և առաջարկեց բելգիական կառավարութեանը համաձայնութեան պայմանները, սակայն բելգիական կառավարութիւնը հրաժարվեց ծանօթանալ այդ առաջարկութիւնների բովանդակութեան հետ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պատրօպրատի քաղաքային

Հայ ազգային ուժերի միավորման գործը ամենաանհրաժեշտ խնդիրն է ներկայ պահին։ Ամենքս էլ զգում ենք այդ։ Ամենքս էլ ձգտում ենք դեպի այդ։ Ամենքս էլ ուզում ենք, որ հայ ազգային ուժերը միանան, որ հայ ազգային ուժերը կազմակերպվեն, որ հայ ազգային ուժերը ներդաշնակ գործեն։ Ամենքս էլ ուզում ենք, որ հայ ազգային ուժերը ոչ թե ցրված, ոչ թե ցիր ու ցան գործեն, այլ միասնական, կազմակերպված գործեն։

Հետաքրքրական է, որ Ռուսաստանի ներկայացուցիչները Լիգայի ժողովներում ոչ մի անգամ չեն հանդես եկել Ռուսաստանի ներսում տեղի ունեցող ազգային հարցերի կապակցությամբ։ Ռուսաստանի ներսում ազգային հարցերի մասին Լիգայի ժողովներում խոսել են միայն ուրիշ պետությունների ներկայացուցիչները։ Այդ հարցերի մասին Լիգայի ժողովներում խոսել են Ռուսաստանի հետ պատերազմող պետությունների ներկայացուցիչները։ Ռուսաստանի ներկայացուցիչները ոչ մի անգամ չեն խոսել Ռուսաստանի ներսում ազգային հարցերի մասին։ Ռուսաստանի ներկայացուցիչները միայն մի անգամ են խոսել Ռուսաստանի ներսում ազգային հարցերի մասին, երբ Լիգայի ժողովներում խոսել են Ռուսաստանի հետ պատերազմող պետությունների ներկայացուցիչները։ Ռուսաստանի ներկայացուցիչները միայն մի անգամ են խոսել Ռուսաստանի ներսում ազգային հարցերի մասին, երբ Լիգայի ժողովներում խոսել են Ռուսաստանի հետ պատերազմող պետությունների ներկայացուցիչները։

Ռուսաստանի ներկայացուցիչները Լիգայի ժողովներում խոսել են միայն

Այժմ, երբ արդէն անցել է ամբողջ ութ տարի, երբ օրէնքով պահանջած՝ դատարանին դիմելու իրաւունքը կորցրել է Ս. Քամալեանը, յանկարծ զարթել են նրա պատուազգածութիւնն ու ինքնասիրութիւնը և նա մի շարք՝ հայհոյանքներով լի բաց նամակներով առաջարկում է իրան մեղադրողին, որ տարիներ առաջ հրապարակով գրած և անթիւ անգամ կրկնածները մի անգամ ևս նորից կրկնի, որպէսզի վերջանկնվի դատարանին դիմելու իրաւունքը։

Այդ մի տեսակ պահանջկոտ առաջարկութիւնը Ս. Քամալեանի կողմից աննուազն աբսուրդ, անհեթեթութիւն է։

Հեռուից դիտողի և գործին անծանօթ անձանց համար այդ մի շարք նամակներից առաջին նուազ այնպէս է թւում, թէ Ս. Քամալեանը կարծես արդարանում է... եթէ նոյնիսկ դատարան էլ չը գնայ, և որ նա որպէս թէ բամբասանքի ու անհիմն մեղադրանքի զոհ է հանդիսանում։ Սակայն այդ ուղղակի մոլորութիւն է։ Ս. Քամալեանը ոչ մի կերպ չի կարող արդարանալ հասարակութեան աչքում, որովհետև Լ. Մելիք-Ադամեանի յօրինուած հարցը արդէն տարիների, գրեթէ մի ամբողջ 10-ամեակի անցեալ ունի։ Ս. Քամալեանը լռեց և չը համարձակվեց գնալ օրինական դատարան նոյնիսկ այն ժամանակ, երբ Ներսիսեան զպրոցի թէ հոգաբարձութիւնը, թէ մանկավարժական ժողովը, թէ բարձր դասարանի աշակերտները պահանջել էին կտրականապէս՝ կամ դատարանով մաքրվել և կամ բոլորովին հեռանալ դպրոցից։ Եւ Ս. Քամալեանը գլխիկոր հեռացաւ, չը նայելով որ մէջտեղը պատուի խնդիր կար դրված։

Եւ գրեթէ տասը տարի անցնելուց յետոյ Ս. Քամալեանը յանկարծ հանդէս է գալիս բացնամակով Լ. Մելիք-Ադամեանի և Գր. Բալասանեանի դէմ, այս վերջինի դէմ և այն պատճառով, որ նա 1907 թ., դեռ Լ. Մելիք-Ադամեանից էլ առաջ, իր հրատարակած բրօշիւրում շատ աւելի ծանր մեղադրանքներ էր բարդել Ս. Քամալեանի վրա, քան Լ. Մելիք-Ադամեանը «Զարկ» շաբաթաթերթում։ Գր. Բալասանեանը Ս. Քամալեանին պատասխանեց և նորից մի առանձին ապացոյցով «գլխովին ջնջեց իր նախկին բարձր ծանր մեղադրանքների վրա», խոստանալով՝ «անհերքելի փաստաթղթերով հաստատել դատի միջոցին», ասած և «անհամբեր սպասում էր դատարանի կոչնագրին»։ Իսկ Լ. Մելիք-Ադամեանը այդ նամակը ամենասրտացաւ կերպով թողեց առանց պատասխանի։

Սրանից յետոյ արդէն Գր. Բալասանեանը հրապարակ է հանում նորից և աւելի մեծ ապացոյցով ու առանց քաշվելու յայտնում է, որ ինքը... հրաժարվում է այն բոլոր մեղադրանքներից, որ թէ մամուլի մէջ և թէ առանձին բրօշիւրում բարդել էր Ս. Քամալեանի վրա։

Պարզ ու ափ-աշկարա երևում է, որ այս բոլորը ի միասին վերցրած՝ մի նախամտածված մանեւր էր, որպէսզի Լ. Մելիք-Ադամեանին համբերութիւնից հանեն և նրա պատասխանը խզել տան։ Իսկ երբ այդ ևս չյաջողվեց, Ս. Քամալեանը նորից ասպարէզ իջաւ ձեր թերթի № 174-ում և իր հայհոյանքով լի բաց նամակով աշխատում է մի կերպ արդարացնել ինքն իրան և համարեա հաստատում է մեր վերոյիշեալ բոլոր նամակների մէջ եղած սերտ կապի ենթադրութիւնը, որ ցոյց է Ս. Քամալեանի վերոյիշեալ նամակի հետևեալ տողերից։

«Ձը գիտեմ՝ (Լ. Մելիք Ադամեանի) գրքերի մէջ յիշած փաստաթղթերը կեղծ լինելով երկինք թռան, թէ վկաները յանկարծ մեռան»։

Ձակերանների մէջ առած այդ ասողները կարդալուս պէս իսկոյն յիշեցի, որ անցեալ տարի իսկապէս որ մի այդպիսի բան տեղի ունեցաւ, միայն թէ... մի քիչ ուրիշ կերպ, այն է՝ Լ. Մելիք-Ադամեանի գրասեղանի փակ արկղը իրան-իրան կտրվելով ու բացվելով՝ միջի փաստաթղթերը թռան...ու մնան Մելիք-Ադամեանի գլխան յորդորված հաստատիկ «բաբեկամի» ծոցի գրպանները, որին ակամայ ականատես եղայ ես՝ տողերիս գրողը։

Հարկաւոր դէպքում փաստաթղթերի թռցնողի անձնաւորութիւնը կը հաստատվի անշուշտ նաև ուրիշ վկաներով։

Այդ ամենից յետոյ դժուար չէ ենթադրել, որ գողացած փաստաթղթերը հաւանաբար կանուխէն ընկել են Ս. Քամալեանի ձեռքը, ուստի նա կարծում է, թէ իր հակառակորդը արդէն զինաթափ է եղած և այդ պատճառով հայհոյանքներով լի նամակներով կատաղաբար ոտքակոծում է Լևոն Մելիք-Ադամեանին, լաւ գիտենալով, որ պատասխանի չի արժանանայ, բայց այն յոյսով, թէ գուցէ այդ կերպ կարողանայ՝ առանց դատարան գնալու էլ... արդարանալ։

Սակայն այդ բանը չի աջողվի նրան. նա ոչ մի կերպ չէ կարող արդարանալ թէ հասարակութեան և թէ մանաւանդ իրանց զաւակների ապագայով հետաքրքրվող ծնողների աչքում։

—

Ահա այդ վերի գրածս տարայ Թիֆլիսի թերթերից մէկի խմբագրութիւն, սակայն վերջինս՝ բացի այն, որ մերժեց տպագրել այլ և յայտնեց, որ իրանց թերթում կը տպվի Մխիթարն Լևոն Մելիք-Ադամեանի հաղադատութիւնը Ս. Քամալեանի կեղծիս։

Ինձ համար միանգամայն անհասկանալի է այդ խմբագրութեան կողմից ցոյց տուած այդ ատիճան միակողմանի վերաբերմունքը դէպի իր իսկ յարուցած խնդիրը, ասած և ակամայ հարց է ծագում, արդեօք յիշեալ խմբագրութիւնը իրաւունք ունի չընդունելու՝ իր էջերում իսկ յարուցված հարցի մասին կողմնակի դիտողի կարծիքները ու դիտողութիւնները։ Բայց մանաւանդ այդ խմբագրութիւնը ինչ իրաւունքով է իրան թոյլ տալիս պահանջելու Լևոն Մելիք-Ադամեանից, որ նա հակառակ իր համոզման արձագանք տայ որևէ մէկի քաղաքին ու պատասխանի նրա հայհոյանքներին։ Չէ որ այդպիսի պահանջը աւելի քան անհեթեթութիւն է։

Չէ որ նոյն այդ խմբագրութեան ևս շատ լաւ յայտնի է, որ Լևոն Մելիք-Ադամեանը իր ժամանակին և այն էլ բազմաթիւ անգամ, ինչպէս նաև թէ իրանց թերթի և թէ «Մշակի» մէջ առաջարկել է Ս. Քամալեանին, որ սա դիմէ օրինական դատարանին, որովհետև իր համար անպատուութիւն է համարել գործ ունենալ նրա հետ թէկուզ միջնորդ դատարանով։

Ի վերջոյ՝ այդ թերթի խմբագրութիւնը մրթթէ չէ հասկանում, որ իր այդ տարօրինակ վարմունքով հասարակական թերթը իջեցնում է մի մասնաւոր մարդու շահերը պաշտպանողի աստիճանին։

Գ. Խարազեան

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թիֆլիս, 2 օգոստոսի

Նորաշէնի ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանի չքաւոր աշակերտուհիների ճաշարանի օգտին ստացվից տ. Մարիամ Յովսէփեան Փրիդոնեանից 15 ր., նորոդ հանգուցեալ Կատարինէ Հէյնրեանի զգեստի վրա պակ դնելու փոխարէն։ Վարչութիւնս յայտնում է նուիրատուին իր լիաբերան շնորհակալութիւնը։

Նախագահ վարչութեան՝
Մարգիս ա.-ք. Շիօյեանց

—

Սղնախ, 22 օգոստոսի

Սրանից մօտ 40 տարի առաջ Ալէքսանդր և Մելքոն Ամիրխանեանները կառուցին Նաւօմխարիի ս. Աստուածածին եկեղեցու գաւիթում երկյարկանի քարաշէն մի շինութիւն չորս սենեակով՝ ուխտաւորների համար։ Այդ շինութիւնը վերջերս պահանջում էր լուրջ վերանորոգութիւն։ Տեսնելով այս՝ Ալէքսանդր Ամիրխանեանի որդի Նիկողոսը վերանորոգից իր հաշվով իր հօր կառուցած շինութիւնը ծախսելով մօտ 500 ր.։ Նաւերաւոր Նիկողայոս Ամիրխանեանին յայտնում եմ խորին շնորհակալութիւնս։

Նաւօմխարիի և Ծարսկիէ-Կօլոդցիի ծխատէր՝ Ց. ք. Գրիգորեան

ՀԱՑ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՊԱՐՍԿԱՀԱՑ ԿԵԱՆՔԻՆ

—

Թէհրան, Սպահան, Ղազվին, Բաշտ, Ղազվէնի՝ բոլորի ուսուցչական խմբերն էլ արձակված են, շատերի հոգաբարձական կազմը փոխված, բայց և այնպէս շատ տեղերում էլ պայքարը տակաւին շարունակվում է։ Գլխաւոր շարժառիթ ներկայանում է այն, որ տարիներ շարունակ կրթական ասպարիզին տիրացել են յայտնի թայֆայականները, որոնք ոտնատակ տուած կանոնագիր, ծրագիրը, ազգային առանձնայատկութիւնները, տարադիցիները, կրթական գործը դարձրել են մօնոպոլիա իրանց «աղերքի» և «աղջիկների» համար ու անխնայ կուսակցական թոյն ներսրսկում մատաղ սերնդի երակներում։ Ժողովուրդը, ամբոխը, դէմոկրատիան, ականատես լինելով այդ կարգի գործիչների բացասական արդիւնքին, ոտքի է կանգնել և կամենում դպրոցն ու հասարակական հիմնարկութիւնները ազատել այդ «գաղափարական ֆալսիֆիկայից» և շահագործումից։ Ժողովրդի և «գաղափարականների» բախումն զօրեղ թափով երևան է եկել Րաշտում. ուղղակի երկու զօրեղ բանակի բաժանված, բուռն թափով պայքարում են՝ խորութիւն չը դնելով զէնքի մէջ։ «Գաղափարական» կողմը բացի իր սովորական զէնքերից—սպառնալիք, հայհոյանք, ամբաստանութիւն—այլ և այս-ինչ-չին մատնիչ է, յայտարարում, այս-ինչին դաւանափոխ, այս էլ բաւական չէ, երևան են բերել փղոցային թռուցիկների սիստեմը։ Օրական մի երկու տպագրած թռուցիկներ, են կպցնում եկեղեցու դրանը և գրում ժողովրդի մէջ։ Ինչ բովանդակութեամբ—բառի բուն նշանակութեամբ «փողոցային»։ դեռ զանց ենք առնում անհամակներն ու երգ կամ ոտանաւոր հայհոյաբանութիւնները, որ քաղաքային պօռտով ուղարկում են ժողովրդական ներկայացուցիչներին։ Միւս կողմն էլ ետ մնալ չէ կամենում «մեր տղերքից»։ Նա էլ դիմում է բուրժուական միջոցների, այն է՝ փոխանակ ընդհանուր ժողով գումարելու և հասարակական հարցերը ժողովով լուծելու՝ զանազան առաջնորդական հրահանգների ու լիազօրների աջակցութեան է դիմում։ Մինչ այս, մինչ այն՝ հասել է դպրոցական տարին, և տուժողը մանուկ սերունդը պիտի լինի։ Խօսեցրէք այդ պայքարող երկու կողմերին էլ և դուք կը տեսնէք, որ երկու կողմերն էլ իրանց արդարացնելու և մեղադրելու լուրջ արգումէնտացիաներ են ներկայացնում, բայց ձրի է այստեղ արդարը կամ մեղաւորը՝ դժուար է ասել, որովհետև նրանք հրապարակային ժողովով դուրս չեն գալիս ճակատ առ ճակատ, որ հնարաւոր լինի տուգել Սակայն փաստ է, որ գլխաւոր հարցերից բացի՝ ժողովրդական ներկայ ազմուկների մէջ չ'լէ դեր չեն խաղում երկու կողմերում էլ զանվող որոշ անհատներ, որոնք աւելի շուտ անձնական մղումներ ունեն, քան հասարակական և ողջմտելի ժողովուրդը իր զաւակների ապագան զոհաբերում է այդ եսական մղումներին ու գործիք դառնում սրա ու նրա ձեռքին։ Ո՞վ պէտք է միամիտ ժողովրդին զգաստութեան հրաւիրէ... Հզօր իշխանութիւնը... Գուցէ իրաւունք ունեն մեր «գաղափարականները» նրանց իրաւասութիւնը չը ճանաչելու և ասելու՝ «թողէք մեռելոց թաղել վմեռելսն»... Գուցէ էջմիածնին աւելի հետաքրքրում է մի մանանեխի աւելի հետաքրքրում է մի մանանեխի կամ մի ոսպնի հարց, քան Պարսկահնդկաստանի լայնածաւալ թեմը, որ հինգ-վեց տարիներով զրկված է թեմակալից։

Բ ա շ տ Մար

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՆԲՐԻՆՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՑԳԻՑ

—

Հասան-Կալէ, 26 օգոստոս

Վերջին օրերս թիւրքերը թէ էրզրումի մէջ և թէ տեղ քիչ մը խեղճացեր էին. կերևի թէ ռուս-ֆրանս-անգլիական վերջնագիրը, որուն շղուկները մենք տեղս միայն լսեցինք, ունեցեր էր իր ազդեցութիւնը Կ. Պոլսոյ կեդրոնական կառավարութեան վրայ, իսկ թիւրք ժողովուրդն ալ ոչ այլ ինչ է, եթէ ոչ իր կառավարութեան հրամանները կույր կամակատարը, անոր տրամադրութիւնները արագացումը, նամանաւանդ այն պարագային, երբ խնդիրը կը վերաբերի ուրիշ ազգութիւններու և կամ այդ ազգերու վերաբերմամբ կրճատացնող ակռաներուն։ Բայց չենք գիտեր ի՞նչ պատահեցաւ, նորէն տրամադրութիւնները փոխուեցան, նորէն պատերազմական՝ քրիստոնէից արիւնի և թալանի թիւրքական գեհենի քնազդը տիրականօրէն իշխեց մարդկանց մաքերու և մտածողութեանց վրայ։

Երէկ արդէն քիչ մնաց, որ Մերզոնէկի գնդին զօրապետներէն մէկը քանի մը նիզամիէ զօրքերու հետ խումբ մը հայեր կոտորէր. բարձրագոյն իշխանութիւնը անգամ սպառնաց հրի և սրի մատնել անոնց ինչքը. և այդ միայն անոր համար, որ մայրին վրայ կանգնած քաղաքացիները բարև չէին բռնած խրոխտ սպային։

Երէկ Տիգրանակերտէն լուր մը հասաւ, որ հայոց շուկան ամբողջապէս վերէն վար այրեր են թիւրքերը ըսելով՝ «Եթէ երկիրը և հարստութիւնը մեզի չպիտի մնայ, թող ուրիշին ալ չմնայ... գեավուրներ ալ չպիտի մնան այս երկրին մէջ...»։

Գաղաքի թիւրքերութեան տեղս հաւաքուած համիդիէ զունդերու գաղանային բնազդները գրգռելու համար առիթ աւելի բան պէտք չէր. առաջ ալ գուցէ հարկ է բացատրել համիդիէ սպայի վերաբերմունքը։

Այսօր նման լուր եկաւ և Տրապիզոնէն։ Այստեղ ալ թիւրքերը ուզեր են այրել ռուսական հիւպատոսարանը (բայց գիշեր ատեն և գաղտնի), սակայն սխալմամբ վառեր են հիւպատոսարանին կից ազգային վարժարանի (մանչերու) հոյակապ շէնքը։ Հիւպատոսն ու հիւպատոսարանը զերծ են մնացած վտանգէ։

Կուզէինք պահ մը չհաւատալ այդ լուրին, որքան ալ ան ամենաստոյգ աղբիւրէ էր եկած, մանաւանդ որ լուրը կը վերաբերէր ռուսական հիւպատոսարանին ու հիւպատոսին. չէինք ուզեր թոյլ տալ մտածողութիւն մը, որ թիւրքը նման փափուկ վայրկեանին կրնայ օտար պետութեան ներկայացուցչի մը դէմ նման վայրենի վարմունք մը թոյլ տալ, բայց Էրզրումէն Ռուսաստան գացող՝ ռուսական տեղական հիւպատոսարանի քարտուղար կէրժէի աղջկան չախչախուած գլուխը տեսնելով այլ ևս կասկած չէր մնար, որ թիւրքերը ատոր ալ ընդունակ են։ Ինչպէս պատմեցին մեզ իրազեկները, կասիօնը պատրաստ է։ Տեսէք, թէ քարտուղարին՝ բերանացի իշխանութեանն ըրած յայտարարութեանն ինչ է պատասխաներ կառավարութիւնը. «Այդ արարքին հեղինակները թիւրքեր չեն կրնար ըլլալ, այլ հայերը՝ նպատակ ունենալով երկու հարց ևս սրբով ապրող պետութիւններու (ռուսի և թիւրքի) միջև ամեն ինչ խառնակել»...

Աակէ երկու շաբաթ առաջ Հասան-Կալէի ամրութիւններէն ռուսական հիւպատոսարանի քարտուղար Սամսօնովի վրայ արձակուած գնդակներն ալ (երբ ան Կարաուրգանէն փոստան ստացած ևս կուգար չափար (կոլբէր) չունենալու պատճառաւ) երևի հայերու կողմէ էր։

Կամ գուցէ Էրզրումի Կարսի դուռ կոչուած մուտքին մօտ թիւրք զինուորի հրացան քաշելը ռուսական հիւպատոսարանի դիւանապետին վրայ՝ նորէն հայերու կողմէ էր։

Եւ այս ամենը կըսեն առանց ամչնալու, առանց քաշուելու, ենթադրելով որ դիմացինը դեռ կաթ կուտէ։

Ինչպէս որ ըսին ալ, թէ թիւրք զինուորը ոչ թէ ուզեր է զէնք պարպել դիւանապետի վրայ, այլ զէնքի հետ խաղացեր, իսկ վերջինս այդպէս է թուեր... և այս ըսողն ալ Ֆէյզի փաշան էր՝ Էրզրումի կօղ օրդու-կօմանդանը...

Ինչպէս կը տեսնէք, այժմ պրօվոկասիօնները շրջանն է։ Եւ այդ պատճառով ալ օդը խառնած է, մթնոլորտը մաղձոտ և չարագուշակ. Թէ ինչ կը սպասէ մեզ հայերուս, ինչ վիճակ կը ներկայացնենք և ինչ սոսկալիներ կապրինք, այդ անկարող եմ նկարագրելու։ Սիրտ ունեցողն ինք շատ լաւ կը զգայ այդ ամենը։

Ա. Կ.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՒԱԳԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսմնաբան-պանիօն Օ. Կ. ՕՐԲԵԼԵԱՆՑԻ

(Հիմնված 1844 թուին)։

Երեխաներ (տղաներ և աղջիկներ) պատրաստվում են պետական միջնակարգ բոլոր դպրոցները մանուկ համար։ Երեխաների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, իսկ զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 4-ից։
Лермонтовская ул. № 1. 819. 4—4

Մեծ-Ղարաբլիսայի հայոց եկեղեցական դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է ի գիտութիւն նոյն գիւղի դպրոցի աւագ-ուսուցչութեան համար դիմողներին, որ ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ հրաւիրված է, հրաւէք չը ստացողներն ազատ են։

Հոգաբարձ. խորհրդի նախագահ՝
Բժ. Ա. Վարդանեան
825. 3—2

ՐԱՇՏԻ հայոց դպրոցի համար ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ Մի աւագ-ուսուցիչ Մի ուսուցիչ եւ Մի վարժուհի

Պայմաններն են. առաջիկ աւագ-ուսուցչին 800 րուբլի, իսկ ուսուցչին և վարժուհուն 600-ական րուբլի։ Ամենքին ճանապարհածախս, քնակարան, լոյս և վառելիք։ Պայմանաժամը մի տարով։
Դիմել «Մշակի» խմբագրութեան։
823. 3—2

Մամուլի տակ է
Ց. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ «ԻՐԱՒՔԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԾՎԱԾ ԹԻՒԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ»

Գ. տար., Գ. հրատ., բարեփոխված մեծ քանակութեամբ աւելի բարդ խնդիրներով և որոշ տեսակների վերածված խնդիրների առանձին խմբակցութիւններով։

Պահասը «Գիր» գրախանութում է, ուր վաճառվում են այս դասագրքի նաև Ա.+Բ. և Դ. հատորները։

Ա.+Բ-ի գինը 30 կ., միւսներինը՝ 35-ական։
(30, 3, 7) 807. 4—3

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՃԵԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 21/1. Տելեֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում ենատեստատներ։

Դասընթացքները կատարվում են կուրսերում՝ Լօնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ըէալ կեանքից են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., վերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առեւտրական թուաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն համրիչի վրա. 7) Գայիչագրութիւն (ամենավառ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) **Օwար լեզուներ.** 2) Տպագրութիւն. 3) Դակիլլօգրաֆիա (բժշկութեան և ուր.) և 4) Առեւտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գաս-գաս։ Ունկնդիրների թիւ չատութեան պատճառով բացվում է երկրորդ դասընթացք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Դրագիրը և կանօնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնականներ և առեւտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ **Տ. ՓԻԼՕՃԵԱՆ**
(ա. օ.) 720. 0—20

ՀԱՅԱՍՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՑԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ Ա-ԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ

Երկսեռ անձանց համար
(XV տարի)

Դասընթացքները գտնվում են Առեւտրի և Արդիւնաբերութեան Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ։

Դասընթացքներում ուսանվում են իտալական կրկնակի սիստեմով հաշուապահութիւն համապատասխան արդիւնաբերութեան զանազան ճիւղերին, առեւտր. թուաբանութիւն, առեւտր. թղթակցութիւն, առեւտր. իրաւունք, տպագրութիւն և ցանկացողներին սովորեցնում են գրող մեքենայի վրա։

Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 15-ից 1914 թ.։

Դասընթացքները տեւելու են 5 ամսից ոչ աւելի։ Դասընթացքներն աւարտողները ստանում են ատեստատներ։ Զբաղմունքները երեկոները՝ շաբաթական 3 անգամ։ Վճարը 40 ր. ամբողջ դասընթացքի համար։

Ինդրագրերը յանուն Թիֆլիսի Առեւտրական Դպրոցի վերատեսչի ընդունվում են դպրոցի դիւանատունը առ. ժ. 9-ից մինչև կեր. ժ. 2-ը։
(օ.մ.) 802. 10—5

ԿԱՐ ՈՒ ՉԵՒԻ ԴՊՐՈՑ Ն. Գ. ՇԱՀՈՒՄԵԱՆ-ԴԱՇՏՈՑԵԱՆԻ

Ստանդվում են նաև չքեղ ձեռագործներ։ Կուրսը տեւում է 1—4 տարի, նայած աշակերտուհիների հասակին։ Ընդունվում են պատուէրներ կանանց և երեխայոց զգեստների և սպիտակեղէնի։ Ընդունելութիւնը ամենայն օր, առաւօտեան ժամը 10—2-ը և երեկ. 5—6-ը։ Հասցէն՝ Экзаршеская площадь, № 5.
814 10—5

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ. ԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ

(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արեւելեան լեզուների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԻ ՓՐՊԵՍ-ԿՈՒՐԱՏՈՒ ԴՆԵՐՈՎ։

Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный